



## Ս Փ Յ Ո Ւ Ա Ք Ո Ւ Մ

### ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Ամերիկահայ ազգային ու կրոնական կյանքի տարեգործյանց մեջ պատմական փայլուն էջեր պիտի արձանագրեն 1959 հոկտեմբեր 30-ի և նոյեմբեր 1-ի շքեղ հանդիսությունները, զորս տեսնելու բախտավորությունը ոմնեցավ մեծագույն նյութ-ծորքի և շրջակայքի հայ գաղութը խոր ներշնչմամբ:

Այսպիսի հոկտեմբեր 30-ը պատմական արեգաշոր օր մը եղավ հայ ժողովորդին համար, հակառակ որ կանձրեմք: Զէ՞ որ սրտերը լեցված էին հրճվանքով, անզուսպ ուրախությամբ: Անոնց դիմագծերուն վրա դյուրությամբ կարելի էր տեսնել գնահատանքի ու երախտագիտական գաւացումներու դրոշմը: Ամեն շրթոնակ օրնություն մը ուներ Մայր Տաճարի, Աղքային տան և առաջնորդարանի շինության հանձնախումբին, որ, առաջնորդությամբ իր մեծանուն ատենապետին՝ տիար Հայկ Գավուգյանի, և շնորհիվ բարեհամբավ Տիարապեքիրյան եղբայրներու երկարած բարերար ձեռքին, հաշողեցավ երեք կոթողներեն առաջնորդարանը բարձրացնել այնպիսի շքեղությամբ ու ներքին արդիական կահավորություններով, որով մենք հայերս հպարտ պիտի մնանք, իսկ օտարներ, հմայված անոր պատմական դիրքով ու գեմքով, պիտի շանան խորասով մեր պատմությամբ, մեր փառահեղ անցյալով ու ներկայով և մեր մշակութիթանկագին արժեքներով:

Առաջնորդարանի օծումն ու բացման արարությունը ընթացք առին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվոր մեջ ժողովուրդը խուներամ: Համած էր: Առաջակարգին իրենց տեղերը գրաված էին օրվան մեծանուն բարերարները, տեր և տիկին Սարգիս Տիարապեքիրյան և անոնց սիրուն որդին, տեր և տիկին Հայկ Գավուգյան, տեր և տիկին երգանդ Աղաճանյան՝ Քիվենդեն,

տեր և տիկին Հարություն Թադեոսյան, տիկին Զարուհի Գալիմբյարյան, տիկին Պապյան, Կանադային, փաստաբան Վինսենտ Յարդրմ և այլ հեղինակավոր անձնավորություններ:

Օրվան եկեղեցական արարողությանց կմամբակցին մեծագույն նյութ-ծորքի յոթը եկեղեցիներու կրոնավորները, Երգեցողությունը կատարվեցան «Կոմիտաս» երգախումբի կողմե, ղեկավարությամբ Իսահակ Արրահամյանի:

Սուրբ պատարագի հանդիսավոր պարարությունը կատարվեց նախկին առաջնորդ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Գալֆայան: Սույն արարողությանց ներկա էր նաև առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Մյուլոն ծայրագույն վարդապետ Կրծիկյան:

Հավարտ սուրբ պատարագի, առաջնորդ գերազնորհ Տ. Միոն արքեպիսկոպոս Մանուկյան տվավ ավուր պատշաճի շինիչ և Հոգեշնորհ քարոզ մը, վեր առնելով «տալու և զոհաբերելու կամեցողությունը, ոգին», և անդրադառնալով օրվան բարերարներուն՝ տպավորիչ ներրողանքով մը դրվատեց Տիարապեքիրյան եղբայրներու ազգափրական, հայենասիրական և բարեխիրակուն բարձր ոգին, որոնց խոսուն ապացուցներ են, ավելցուց սրբազնոր, անոնց Միլանոյի մեջ հիմնարկած հայոց եկեղեցին, Ամերիկայի մեջ մեր առաջնորդարանը և այլ տեղեր զանազան ազգային զոհողություններ:

Մեծ շուրջով տեղի ունեցավ Հոգեհանգստյան արարողություն բարերարներու հանգուցյալ ծնողաց՝ տեր և տիկին Մանուկ և Զարուհի Տիարապեքիրյաններու, որոնց հիշատակին նվիրված է նորակառուց առաջնորդարանը:

Եկեղեցին վերջավորության հավատաց-  
յալներ առաջնորդվեցան առաջնորդարան,  
որ անցքի ժամանակ ժապավենը կտրեց  
բարերար Տիարագերիրան։ Մուտքի առաջին  
բաժնին մեջ, գեպի ձախ զետեղված էր  
Հանգույցալ Մանուկ Տիարագերիրանի բրոն-  
զե կիսանդրին։

Ներկաները ազատ էին պտույտ մը կա-  
տարելու շենքեն ներս, որոնք հարկ հարկ,  
սենյակ սենյակ հափշտակությամբ կսքան-  
շանալին անոր գեղակերու ճարտարապետա-  
կան կառուցվածքին, որ գործն էր ճարտա-  
րապետ Զարեհ Մուրյանի, պատշաճ կահա-  
վորման, ձեղուներեն կախված լուսաճա-  
ճանչ ջահերում, ամեն ինչ որ կարելի է ա-

կընկալել այսպիսի հոգեոր իշխանատան մը  
համար, գրեթե ամբողջացված էր։

Ընդունելության սրահին մեջ, որ արդեն  
հավագլած էին հրավիրայներ, տեղի ունե-  
ցավ կեսօրվա համեստ ճաշ, նախագահու-  
թյամբ առաջնորդ հոր, Սիրու արքապիսկո-  
պոս Մանուկյանի։

Այդ ազգային մտերմիկ մթնոլորտին միջ  
ստեղծված խանդավառությունը զարթնումն  
էր կյանքի մը, զոր կունենային անցյալին  
մեր իշխանազունները, իրենցմով ձեռք բեր-  
ված ազգային հաղողություններու տոնակա-  
տարության առթիվ։

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՑԱ.38 ԵԿԵՂԵՑԻ»,  
պաշտոնաթերք առաջնորդարանի հայոց  
Ամերիկայի, № 11, դեկտեմբեր, 1959 թ.)

## ՀԻՇԱՏԱԿԵԼԻ ԵՐԵԿՈ ՄԸ

Առաջնորդարանս գեղեցիկ մտածումը ու-  
նեցած էր առաջնորդարանի նորակառույց  
շենքին բարերար Տիարագերիրան եղայրնե-  
րը պատվել հանդիս-ճաշկերությունով մը, Հոկ-  
տեմբեր 31 1959-ին, երեկոյան ժամը 7-ին,  
Նյու-Յորքի Ռուզվելտ պանդոկին մեջ, որուն  
ընթացքին նաև տիար Մարգիս Տիարագերիր-  
յան պիտի ստանար Ազգիս Վեհափառ Հայ-  
րապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին  
կողմէ շնորհված Շելուսավորչի առաջին կար-  
գի ադամանդակուու շքանշանը։

Որոշյալ ժամուն մոտ երկու հարյուր ազ-  
գայիններ կրազմեին իրենց համար նշա-  
նակված սեղաններուն շտորց։ Տ. Մամրիք  
արքապիսկոպոս Գալֆայանի աղոթքով ներ-  
կաները կսկսին ճաշի։

Ճաշեն անմիջապես ետք, օրվան սեղա-  
նապետը՝ թեմական խորհուրդի ատենապետ  
տիար Երվանդ Աղամանյան կսկսի հայտա-  
գրի գործադրության։ Հարգելի սեղանապե-  
տը ներշնչիլ զրությամբ մը կրացատրե-  
նապատակը հանդիսավոր մու գեղեցկորեն  
համադրած վեր կառնեն Տիարագերիրան եղ-  
րայրներուն նվիրատվության ոգին, անոր  
մեջ տեսնելով մեր հայ ժողովուրդին անհա-  
տական և հավաքական հավատքն ու նվի-  
րումը՝ հանդեպ եկեղեցական ու ազգային  
արժեքներուն պահպանումին, որ կուգա  
Վարդանաց շրջանեն իսկ։

Ապա սեղանապետը կհրավիրե Մայր Տա-  
ճարի շինության հանձնախումբի ատենա-  
պետ տիար Հայկ Գավուգյանը, որպեսզի  
այս գեղեցիկ առիթով ան ըսե մի քանի  
խոսք Տիար Գավուգյան, որ շատերուն հա-  
մար զարձած է Շալյր մը, մեծ ուրախու-  
թյամբ կիսուի առաջնորդարանի շենքին ա-  
վարտումին մասին, որ մոտ ատենեն պիտի սկսվի

շնորհիվ Սերովքք Կյուլապի Կյուպենկյան-  
ներու առատաձեռն նվիրատվության։ Անդ-  
րադառնալով Մայր Տաճարի շինության, ան  
քաջ վստահ է, որ մի քանի տարինեն պիտի  
հանգանակ անհրաժեշտ գումարը, շնորհիլ  
հավատացրալ հայ ժողովուրդին պարտաճա-  
նալության։

Ապա կիսուի վերապատվելի Ա. Ա. Պետիկ-  
յան։ Ան առաջնորդարանի նոր շենքին կա-  
ռուցումին մեջ կտեմնե հայ ճշմարիտ քիւ-  
տոնյա ժողովուրդին պարտականությանց  
սկզբանալորդությունը, որ հառաջ պիտք է  
տարվի այս նոր միջավայրին մեջ։

Թիմիս նախկին առաջնորդ Տ. Մամրիք ար-  
քապիսկոպոս Գալֆայանն է խոսողը Մրրա-  
զան հայրը Կեղլափակե իր խոսքը ըսկելով, թի-  
պետություններ կվարդատրեն իրենց առպետ-  
ները շքանշաններով որոնք եղած են զոհ-  
վողներ երկրին համար իսկ եկեղեցին շքա-  
նշանով կզարդարե կուրծքը անոնց, որոնք ե-  
ղած են միրու և խաղաղության պայքարի աս-  
պետներ, ինչպիսին է այսօր տիար Մ. Տիար-  
պետիրյան։

Թիմիս առաջնորդ Տ. Միոն արքապիսկոպոս  
Մանուկյան հրավիրե առաջնորդական փո-  
խանորդ Տ. Մյուտոն ծայրագույն վարդապետ  
Կրծիկյանը, որպեսզի հայր սուրբը կարդա-  
հայրապետական կոնդակը Ապա թիմական  
խորհուրդի ատենապետի տիար Ֆեռնկ Զոթ-  
յան կարդա կոնդակին անգլերն թարգմա-  
նությունը։ Հուզիլ է պահը, երբ նախկին  
առաջնորդ Տ. Մամրիք սրբազան կցեանեն  
կուսավորյան շքանշանը պը. Ա. Տիարի-  
քիրյանի կուրծքին և զույգ սրբազան հայրերը  
սրտագիսն կողջագուրեն և կշնորհավորեն  
բարերարը։

Առաջնորդ Միոն սրբազան հայրը, հուզու-  
մի և ուժախության ապրումով զեղուն, կու-

տա հանդիսականներուն իր պատկամը: Սըրբազան հոր համար Առաջնորդարանի շնորհ լեցուն է վեհ խորհուրդով մը: Ան Կոչված է ըլլալու խորհրդանշանը ամբողջ ամերիկահայոց թեմին: Ամերիկահայությունը կունենա մոտ ատենեն իր Մշակութային տունը ևս: Բայց նվիրագունը Մայր Տաճարն է, քանի որ ան պիտի ըլլա խորհրդանշանը մեր միության և սիրու Արդ, բոլոր հայ հավատացյալները անհնարի պետք է բերեն իրենց մասնակցությունը այդ սրբազան գործին: Ապա սրբազան հայրը կիրացացնե իր խոսքը հայտնելե ետք իր սրտագին շնորհակալությունները Տիարպեթիրան եղարց և շնորհավորությունները տիար Ս. Տիարպեթիրանին:

## ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅ ԿՑԱՆՔ

Հունվար 6: Մնունդ և աստվածայատնություն Քրիստոսի: Առուու ժամը 8.30-ին սկսավ ժամերգությունը դպրաց դասու քաղցր երգեցողությամբ: Երբ արարողությունը հասավ «Փառք ի բարձունս»-ին, սրբազան հայրը, զգեստավորված, սուրբ խորան բարձրացավ և կարդաց Մննդյան Ավետարանը, իսկ եկեղեցականը, դպիրք և ժողովուրդ վարեն երգեցին հրեշտակաց երգ՝ «Փառք ի բարձունս»-ը:

Ժամը 10.30-ին սկսավ հանդիսավոր պատարագը: Ս. Գրիգոր Լուսավորիչ դպրաց դասու երգեցիկ խումբը, թափորով, առաջնորդարաննեն դեպի Մայր Եկեղեցի առաջնորդեցին պատարագի սրբազանը:

«Հայր մեր»-ի պահուն, Պատվիրակ սրբազան հոր պատգամեն առաջ, հոգեշնորհ Տ. Հարություն ծալրագուն վարդապետ Մուշյան, ի լուր ժողովրդյան կարդաց Վեհափառ Հայրապետի շնորհավորական և օրհնության գիրը, զոր ներկաներ ունկնդրեցին հոտնկայս:

Վեհափառի օրհնության գրի ընթերցումնեն անմիջապես վերջ, սրբազան հայրը տվավ իր քարոզը, նյութ ունենալով՝ հովիվներուն պատգամված խոսքը՝ «Աւետարաննեմ ձեզ ուրախութին մեծ, զի այսօր ծնաւ ձեզ Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի»: Ենշտը դրավ Քրիստոսի օծյալ Տիրոջ հանգամանքին վրա, իբրև առաջնորդող հոգիներու Ավետարանի ճամբաներեն, դեպի աղբյուրը ճշմարտության, սիրու և խաղաղության, Աստվածի:

Այս սրտագին խոսքերե ետք, տիար Սարգիս Տիարպեթիրյան, ովախության հուզումներով առցուն, կհայտնե իր շնորհակալությունները նախ Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վաղգին Ա Կաթողիկոսին, որ զինք արժանի էր տեսած Լուսավորության շքանշանին, և ապա առաջնորդարանին, որ զինք կպատվեր այսպիսի գեղեցիկ հանդես ճաշկերությունը մը:

Հանդեսը իր լրումին համաներ «Տէր կեցո» մաղթերգով և առաջնորդ հոր «Պահպանիշ»-ով:

(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅԻ ԵԿԵՂԵՑԻ», պաշտոնաթերը առաջնորդարանի հայոց Ամերիկայի, № 11, դեկտեմբեր, 1959 թ.)

## ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅ ԿՑԱՆՔ

Մարդիկ չհասան իրենք իրենց երջանկության, հակառակ անոր որ դարեր շարունակ պատմությունը եղավ որոնում մտքի և ուժի ճամբաներով մարդուն հոգեկան լիության գոյավիճակին, մինչև որ Քրիստոս անձամբ իշխավ խավարին և մեղքի անկումին մեջն վերցնելու զայն, վեր Աստուծո զերագույն սրբության և իր բնության իրագործումին, որ կերպաշխավորե միայն հոգեկան լիակատար ուրախությունը:

Մարդք պիտի սրբվեր իր սկզբնական մեղքեն, զոր ժառանգած էր:

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ ավանդական Ջրօրհնեքի արարողությունը, կնքածալությամբ պր. Գավաֆյանի:

Եկր գաղութի պատմության մեջ առաջին անգամ ըլլալով էր, որ արարողությունը կատարվեցավ Ս. Հովհաննես Մկրտչի մատուցովը, զոր Վեհափառ Հայրապետը ուղարկած էր Պատվիրակ հոր հետ՝ իբրև նվեր և պաշտպան Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցվուու:

Խաչանման այս մասունքին արծաթյա պատվանդանը, մեր կոշին ընդառաջ ելլելով, շինել տվին տեր և տիկին Համբարձում և Օվսաննա Գաղանճյաններ, որոնց այս առթիվ կըսենք՝ «Ռւխտերնիդ ընդունելի ըլլա»:

(Բուենոս-Այրես, «ՀԱՅ ԿԵՐՈՌՈՆ» ամսագիր, 1960 թ. հունվար 1, № 1):

